ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունիսի 2021 թվականի N 902 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 1136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշման (այսուհետ՝ որոշում)՝

1) վերնագրում, 1-ին կետում «ցեմենտներ» բառն իր հոլովաձևերով փոխարինել «ցեմենտներ, պորտլանդցեմենտային կլինկեր» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.

2) նախաբանում նշված «Ստանդարտացման մասին» բառերը փոխարինել «Տեխնիկական կանոնակարգման մասին» բառերով, իսկ «հոդվածի» բառից հետո լրացնել «1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի» բառերը:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

1) «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ» գլխի բառերից առաջ լրացնել «V.» արաբական թվանիշը.

2) «ՑԵՄԵՆՏՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ, ՓՈԽԱԴՐՈՒՄԸ» գլխի բառերից առաջ լրացնել «VI.» արաբական թվանիշը.

3) «ՑԵՄԵՆՏՆԵՐԻ ՄԱԿՆՇՈՒՄԸ» գլխի բառերից առաջ լրացնել «VII.» արաբական թվանիշը.

4) «V.» արաբական թվանիշը փոխարինել «VIII.» արաբական թվանշով.

5) «VI.» արաբական թվանիշը փոխարինել «IX.» արաբական թվանշով.

6) «VII.» արաբական թվանիշը փոխարինել «X.» արաբական թվանշով.

7) «VIII.» արաբական թվանիշը փոխարինել «XI.» արաբական թվանշով.

8) հավելվածի վերնագրում, հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 18-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ 30-րդ, 31-րդ, 35-րդ, 38-րդ, 39-րդ կետերի «ցեմենտներ» բառն իր հոլովաձևերով փոխարինել «ցեմենտներ, պորտլանդցեմենտային կլինկեր» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.

9) 1-ին կետում «Պորտլանդցեմենտ 2523» բառերից հետո լրացնել «պորտլանդցեմենտային կլինկեր 2523 10 000 0» բառերով.

10) 6-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«6. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա և շրջանառության մեջ գտնվող ցեմենտները, պորտլանդցեմենտային կլինկերը պետք է ուղեկցվեն հայերեն մակնշմամբ, համապատասխանության ազգային նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով։».

11) 7-րդ և 8-րդ կետերի «հասակում» բառը փոխարինել «հասունացմամբ» բառով.

12) հավելվածի N 2 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Աղյուսակ N 2

Ամրության դասը	Ծռման ամրությունը, ՄՊա/ոչ պակաս	Սեղմման ամրությունը, ՄՊա, օր հասունացմամբ		Կապակցում	Ծավալի փոփոխման հավասարաչափությունը (ընդարձակում),
		վաղ ամրություն			

				ստանդարտ ամրություն		**սկիզբը, րոպե, ոչ շուտ**	**վերջը, ժամ, ոչ ուշ**	**մմ, ոչ ավելի**
		2 օրական, հասունա-ցում, ոչ պակաս	**7 օրական հասունա-ցում, ոչ պակաս**	**28 օրական հասունացում**				
				ոչ պա-կաս	**ոչ ավելի**			
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
22.5N	-	-	11.0	22.5	42.5	75	10	10
32.5N	5.5	-	16.0	32.5	52.5			
32.5R	5.5	10.0	-					
42.5N	6.0	10.0	-	42.5	62.5	60	10	
42.5R	6.0	20.0	-					
52.5N	6.5	20.0	-	52.5	-	45	10	
52.5R	6.5	30.0	-					
Ցեմենտի աղացվածքի մանրությունը N 008 մաղի վրայի մնացորդը		ոչ ավելի, քան 15 %						
Ցեմենտներում տեսակարար մակերեսը՝ համաձայն Բլեյնի մեթոդի		ոչ պակաս, քան 2800 սմ²/գ և ոչ ավելի, քան 4000 սմ²/գ						
Ցեմենտի ամրությունը ծռման դեպքում		Ստանդարտ 28 օրական հասունացման						

».

13) 13-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«Ցեմենտների քիմիական ցուցանիշները պետք է համապատասխանեն N 3 աղյուսակով սահմանված նորմերին, իսկ պորտլանդցեմենտային կլինկերի քիմիական ցուցանիշները պետք է համապատասխանեն N 4 աղյուսակով սահմանված նորմերին։».

14) հավելվածը լրացնել նոր՝ 4-րդ աղյուսակով.

«Աղյուսակ N 4

Պորտլանդցեմենտային կլինկերում ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի նորմը (%)
Ձանգվածի կորուստը շիկացման ժամանակ, ոչ ավելի	5,0
Չլուծվող մնացորդ, ոչ ավելի	5,0
CaO	Չի

	նորմավորվում
ազատ CaO պարունակությունը, ոչ ավելի	1
MgO պարունակությունը ոչ ավելի	5
Al2O3	Չի նորմավորվում
Fe2O3	Չի նորմավորվում

».

15) 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին կետ.

«17.1. Ցեմենտների մեջ արգելվում է ավելացնել օժանդակ բաղադրիչներ, հատուկ կամ տեխնոլոգիական հավելումներ, որոնք կարող են նվազեցնել ցեմենտի որակական հատկանիշները։».

16) «ՑԵՄԵՆՏՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ, ՓՈԽԱԴՐՈՒՄԸ» և «ՑԵ-ՄԵՆՏՆԵՐԻ ՄԱԿՆՇՈՒՄԸ» վերնագրերից հանել «ՑԵՄԵՆՏՆԵՐԻ» բառը.

17) 19-րդ կետի «51 կգ-ն» բառերը փոխարինել «50 կգ-ը, ցեմենտի միջին զանգվածի թույլատրելի բացասական շեղումը փաթեթում նշված զանգվածի մեջ չպետք է լինի ավելի, քան զտաքաշի -1 %-ը.

18) 20-րդ և 21-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«20. Առանց փաթեթվածքի փոխադրման ժամանակ ցեմենտները և պորտլանդցեմենտային կլինկերը պետք է բեռնառաքվեն հատուկ նշանակու-թյան փոխադրամիջոցներով (հատուկ սարքավորված մեքենաներ, ավտոցե-մենտատարներ, ցեմենտատար վագոններ, նավեր)։

21. Ցեմենտների և պորտլանդցեմենտային կլինկերի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի ապրանքաուղեկից փաստաթղթով, որտեղ պետք է նշված լինեն հետևյալ տվյալները՝

1) արտադրող կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը և հասցեն.

2) արտադրանքի պայմանական նշագիրը կամ լրիվ անվանումը.

3) խմբաքանակի համարը և բեռնառաքման ամսաթիվը.

4) արտադրանքում հանքային հավելույթների տեսակը և քանակը.

5) արտադրանքի ամրության դասը.

6) արտադրանքի երաշխիքային ժամկետը.

7) փաթեթվածքում արտադրանքի զտաքաշը,

8) բնական ռադիոնուկլիդների տեսակարար արդյունավետ $A_{էֆ}$ ակտիվությունը.

9) փոխադրամիջոցի համարանիշը.

10)համապատասխանության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը.

11) համապատասխանության ազգային նշանը և նորմատիվ փաստաթղթի նշագիրը, որի համաձայն արտադրվել է արտադրանքը։».

19) 23-րդ կետի «պահվի» բառը փոխարինել «պահվեն» բառով.

20) 29-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«29. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ցեմենտների, պորտլանդցեմենտային կլինկերի խմբաքանակի կամ սերիական արտադրության համար համապատասխանությունը հավաստելու համար հայտատուն՝

1) պետք է կիրառի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված սերտիֆիկացման ընթացակարգերը խմբաքանակի կամ սերիական արտադրության համար.

2) պետք է դնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N 337-Ն որոշմամբ սահմանված համապատասխանության ազգային նշանը ցեմենտների, պորտլանդցեմենտային կլինկերի փաթեթի կամ պիտակի վրա, իսկ գործընթացների համար՝ նաև օգտագործվող գովազդային նյութերում։».

21) 32-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Սերիական արտադրության ժամանակ ցեմենտների, պորտլանդցեմենտային կլինկերի բաղադրությունը պետք է որոշվի ցեմենտների, պորտլանդցեմենտային կլինկերի արտադրման վայրում ընտրված նմուշով՝ ըստ վկայագրված մեթոդակարգերի։».

22) 33-րդ կետից հանել «, եթե համապատասխանության գնահատումն իրականացվել է Ջ համապատասխանության գնահատման ընթացակարգով» բառերը.

23) 34-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«34. Սերիական արտադրության համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը կատարվում է ըստ իրականացված համապատասխանության գնահատման ընթացակարգի, բայց 3 տարվանից ոչ ավելի:

Խմբաքանակի համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը կատարվում է ըստ արտադրման ժամկետի, բայց ոչ ավելի, քան պիտանիության ժամկետն է:».

24) 35-րդ կետում «ցեմենտների» բառը փոխարինել «արտադրանքի» բառով:

25) 37-րդ կետում «արտադրողին և գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին» բառերը փոխարինել «հայտատուին, արտադրողին և գրավոր ծանուցում է պետական վերահսկողություն իրականացնող մարմիններին» բառերով.

26) 39-րդ կետում «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերը փոխարինել «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և այլ իրավական ակտերով սահմանված կարգով» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշման պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 2-րդ կետով սահմանված պահանջների կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկի հրապարակումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 180-երորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ